

Բնապահպանության ոլորտի խնդիրները և նազմավարությունը

Հաշվի առնելով Արարատի մարզի բնապահպանության ոլորտում առկա հիմնախնդիրները Արարատի մարզում 2015-2018թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունում և իրականացում՝ Էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, շրջակա միջավայրի աղտոտման նվազեցում, մասնավորապես՝ Արարատի Ցեմենտի գործարանում և Զոդի ոսկու կորզիչ ֆաբրիկայում:

2) Տնտեսագիտորեն հիմնավորված բնօգտագործման վճարների համակարգի կիրառում և հավաքված գումարների օգտագործում բնապահպանական նպատակով,

3) “Խոսրովի Անտառ” պետական արգելոցում որսագողությունը արգելելու, անասնատերերին և ապօրինի տարածք մուտք գործելուն խոչընդոտելու համար, իրականացնել միջոցառումներ՝ հողատարածքների սեպաձևության վերացնելու նօպատակով,

4) Բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներում համայնքների մասնակցության ուժեղացում,

- Այդ հիմնախնդիրների լուծմանն ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում,
- համայնքներում շրջակա միջավայրի պահպանության հասարակական խմբերի ստեղծում,
- դաշտապաշտպան անտառաշերտերի վերականգնում,
- բոլոր ճանապարհների երկայնքով անտառաշերտերի հիմնում:

5) Արոտավայրերի կառավարման պլանների մշակում /վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ/:

6) Մարզում կանաչ գոտիների ընդլայնում /անտառի հիմնում, որը կունենա ճանաչողական, ուսուցողական և դաստիարակչական նշանակություն, հետագայում ռեկրեցիոն գոտի ստեղծելու նպատակով/:

7) Արտեզյան ջրերի օգտագործման և շահագործման տնտեսապես հիմնավորված չափաբաժինների և ռեժիմների մշակում և ներդրում:

8) Աղակալման, ճահճակալման, անապատացման դեմ պայքարելու և կրկին գյուղատնտեսական շրջանառության մեջ դնելու նպատակով դրենաժների մաքրման աշխատանքների ընդլայնում:

9) Մարզի քաղաքներում կառուցել կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայաններ:

10) Համայնքներում կազմակերպել արդյունաբերական և կենցաղային թափոնների առանձնացված հավաքում:

11) Ազատի ջրամբարի վրա ինֆիլտրացիոն կայանի կառուցում:

12) Վեդի գետի վրա ջրամբարի կառուցում:

13) Հողերի էրոզիոն պրոցեսների նվազեցման նպատակով համայնքների ամառային արոտավայրերում անասունների արածեցման սահմանված նորմերի և ժամկետների պահպանում:

14) Հեղեղատարային հոսքերով ջրածածկվող և ողողումներ սպասվող տարածքներում շինարարական աշխատանքների կատարում:

15) Աղբի վերամշակման գործարանի ստեղծում:

